ԼՂԻՄ. ԿՈՄԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի կոմերիտմիության մարզկոմի պլենումը քննարկեց մարզային կոմերիտական կազմակերպության դրության հարցը:

Պլենումում մասնավորապես նշվեց, որ Ադրբեջանի ղեկավարությունը, ամեն կերպ խոչընդոտելով ԼՂԻՄ-ի խնդրի արդարացի լուծումը, շարունակում է սրել հաներապետության և ինքնավար մարզի իրադրությունը: Դրա հետևանքով հայ և ադրբեջանական ժողովուրդները հայտնվել են վտանգավոր կացության մեջ, որը սպառնում է վերածվել քաղաքացիական կռիվների: Դրությունը խորացավ քաղաքակիրթ պետության համար աննախադեպ ձեռնարկման՝ Ադրբեջանի կողմից ԼՂԻՄ-ի և Հայկական ԽՍՀ-ի շրջափակման հետևանքով: Ստեղծված իրավիճակի պայմաններում ՀամԼԿԵՄ կենտկոմը չի շտապում սկզբունքային գնահատական տալ ռեգիոնում տեղի ունեցող իրադարձություններին: Տարակուսանք է պատճառում նաև ՀամԼԿԵՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների դիրքորոշումը, որոնք ըստ էության լիակատար անտարբերություն են դրսևորում տեղիս կոմերիտականների և երիտասարդների կենսական շահերը շոշափող խնդիրների նկատմամբ: Այդ ամենը անհերևակայելի դժվարությունների է հանգեցնում մարզային կոմերիտական կազմակերպության գործունեության մեջ, որոնք սեփական ուժերով հաղթահարելը անհնար է թվում:

Հաշվի առնելով ստեղծված կացությունը, կոմերիտմիության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի պլենումը, որը դեռևս 1988 թվականի դեկտեմբերի 6-ին հոչակել էր ԼՂԻՄ-ի կոմերիտական կազմակերպության դուրս գալը Ադրբեջանի ԼԿԵՄ կազմից, արտահայտելով մարզի երիտասարդության գերակշիռ մեծամասնության կամքը, որոշեց միջնորդել ՀԼԿԵՄ կենտկոմի առջև Լեռնային Ղարաբաղի մարզային կոմերիտական կազմակերպությունը Հայկական ԽՍՀ կոմերիտական կազմակերպության կազմի մեջ ընդունելու համար և ՀամԼԿԵՄ կենտկոմին խնդրել, որ քննարկի ու բավարարի այդ միջնորդությունը:

Պլենումը դատապարտեց ԼՂԻՄ-ի և Հայկական ԽՍՀ-ի տնտեսական շրջափակումը Ադրբեջանի կողմից, այն գնահատելով որպես մարդու տարրական իրավունքների խախտում:

Պլենումն ընդունեց ՀամԼԿԵՄ-ից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներին ուղղված հատուկ դիմում, որով պահանջվում է անհետաձգելի միջոցներ ձեռնարկել հայ բնակչության անվտանգությունն ապահովելու, մարզի շրջափակումը վերացնելու, ճանապարհներին խժդժություններ կատարող մարդկանց պատասխանատվության ենթարկելու համար, ինչպես նաև ճանաչել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ինքնորոշման իրավունքը, որն արտահայտված է ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի և հունիսի 12-ի նստաշրջանների որոշումներում:

Պլենումի մասնակիցները հավաստեցին իրենց վճռականությունը՝ այսուհետև էլ պաշտպանելու արդարությունը ԼՂԻՄ-ի խնդրի նկատմամբ, հայտարարելով, որ Ղարաբաղի հարցը կարող է լուծվել միայն ազգերի ինքնորոշման իրավունքի լենինյան սկզբունքի հիման վրա:

Պլենումը մարզի կոմերիտականներին և երիտասարդներին կոչ արեց այսչափ դժվարին պահին ցուցաբերել զսպվածություն, քաղաքական զգոնություն, բարձր գիտակցականություն, չենթարկվել պրովոկացիաների:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի հատ. թղթ.)
Ստեփանակերտ